ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՂԵԿԱՎԱՐ Կիմա Օհանեսյան, երկրորդ խումբ

ՀԵՂԻՆԱԿ Գրիգորյան Մելանյա

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1. ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ 4
ԳԼՈՒԽ 2. «ՄԱՅՐԵՆԻ» ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 8
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 11
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 14
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների մեջ արժեքային համակարգի ձևավորման համար իր անգնահատելի և մեծ դերը պետք է ունենա դպրոցը, ուր երեխան անցկացնում է իր օրվա զգալի մասը: Այս ուղղությամբ դպրոցը և ընտանիքը պետք է համատեղ ուժերով ձևավորեն երեխաների արժեհամակարգը՝ նպատակ ունենալով ստեղծել հասարակությանը պիտանի, բանիմաց, լիարժեք անհատ, որը կմերժի օտար արժեքները, վնասակար սովորույթներն ու բարքերը. միասին կնպաստեն անհատի ձևավորմանը: Մենք ապրում ենք անցումային ժամանակաշրջանում, երբ հին արժեքները կորցրել են իրենց դերն ու նշանակությունը հասարակության կյանքում և այլևս չեն գործածվում, իսկ նոր արժեքները դեռևս ճիշտ չեն ընկալվում: Այստեղ առաջանում են որոշակի դժվարություններ՝ կապված երեխաների արժեքային համակարգի ձևավորման և ճիշտ դաստիարակության հետ: Ժամանակակից դպրոցը պետք է մշակի ազգային դիմագիծը պահելու իր ծրագրերը և մեխանիզմները, դեռահասին կարողանա դնել ճիշտ ուղու վրա: Սակայն ասել, որ այսօր արժեքային համակարգում տեղի ունեցող փոփոխությունների պատճառը միայն գլոբալացումն ու անցումային շրջանն են, սխալ կլինի: Վերջիններս ուղղակի այն գործոններն են, որոնք ավելի են սրացնում այն բացասական երևույթները, որոնք ազգային մտածողության մեջ են ներթափանցում նորամուծությունների հետ միասին:

Ժամանակակից մանկավարժության մեջ կարևոր խնդիր է դարձել սովորողների հետաքրքրության խթանման գործընթացը՝ գիտելիքների ձեռքբերման նկատմամբ: Սա պայմանավորված է այն փաստով, որ ներկայումս սովորողների մեջ փոքր է գիտելիքների յուրացման համար ներգրավածության աստիճանը: Պատճառը կայանում է նրանում, որ նոր սերնդի համար, որն ի տարբերություն ավագ սերնդի, ավելի ինքնուրույն է, ունի ավելի զարգացած ինքնագիտակցություն, կարող է հստակ պատկերացնել իր պահանջները և ամենակարևորը՝ ունի հնարավորություն օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել տարրական դասարաններում Մայրենի առարկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորման ուղիները:

ԳԼՈՒԽ 1. ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Անձնային արժեքների խնդիրները քննարկվել են տարբեր գիտակարգերի շրջանակներում և տրվել դրանց բազմաթիվ սահմանումներ: «Անձնային արժեք» հասկացությունը կիրառվում է տարբեր նշանակություններով: Սակայն միասնական կարծիք այս հասկացության սահմանման վերաբերյալ գոյություն չունի: Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ արժեքային համակարգեր և վարքագծի կանոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ[1]:

Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների կարևոր խնդիրներից մեկն է: Հոգեբանական գիտության բնագավառում արժեքների մեկնաբանության բազմազանության մեջ առավել տարածում ունի այն մոտեցումը, որում արժեքը դիտարկվում է որպես հասարակության կենսագործունեության որոշակի արդյունք: Այդ մոտեցումը ցայտուն կերպով արտահայտված է փիլիսոփաների և սոցիոլոգների գիտական աշխատություններում: Հոգեբանական գիտության բնագավառում անձնային արժեքների հասկացման գերակայող մոտեցումներից մեկն այն է, որ արժեքը դիտարկվում է որպես պահանջմունքներին և շարժառիթներին համարժեք հասկացություն: Մասնավորապես՝ անձնային արժեքները և իմաստը կենտրոնական տեղ են զբաղեցնում հումանիստական հոգեբանության մեջ: Ն. Ժուրավլյովան[2] արժեքային կողմնորոշումների ձևավորման կարևոր նախապայման է համարում վաղ սոցիալականացման պայմանները:

Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում ինտերիորիզացիայի (ներքնայնացման)՝ հասարակական-

[1] Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017, 191 էջ, էջ՝ 44:

[2] Журавлева Н. А., Психология социальных изменений: ценностный подход. - М.: –зд-во «Институт психологии РАН», 2013. – 524 с, с. 186.

քաղաքական, բարոյական, գեղագիտական իդեալների (հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով, որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը: Արժեքային համակարգի ձևավորումն ընթանում է դաստիարակության և կրթության ընթացքում սոցիալական փորձի յուրացման միջոցով: Անձնային արժեքները ձևավորվում են սոցիալականացման ամբողջ ընթացքում:

Ժ. Պիաժեն[3] անձի արժեքային կողմնորոշումների զարգացումը կապում է ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ: Նա համարում էր, որ բարոյական դատողությունների ներքնայնացումը երեխաների մոտ տեղի է ունենում զարգացող մտածողական կառուցվածքների և աստիճանաբար ընդլայնվող սոցիալական փորձի փոխազդեցության արդյունքում:

Լ. Կոլբերգը, հստակեցնելով Ժ. Պիաժեի տեսակետը երեխայի բարոյական զարգացման խնդրին, առանձնացնում է դրա մակարդակները և փուլերը: Առաջին՝ նախահամաձայնեցման մակարդակում բարոյական արժեքներին ենթարկվելը տեղի է ունենում պատժից խուսափելու կամ խրախուսանքի եսասիրական պատկերացումներից ելնելով: Համաձայնեցման մակարդակում շրջապատի նորմերը և արժեքները ընդունվում են ըստ առաջնայնության, արտաքին հեղինակության հիման վրա, հետագայում նաև, ըստ սպասելիքների համապատասխանության, մտերիմների անհավանությունից կամ քննադատությունից խուսափելու ցանկության: Հաջորդ մակարդակում ձևավորվում են լայն սոցիալական նորմերին անձի ուղղվածությունը, մեղքի զգացումից խուսափելու ձգտումը: Հետհամաձայնեցման մակարդակում երեխան սկսում է հետևել սեփական բարոյական սկզբունքներին, որոնք չեն համապատասխանում շրջապատի արժեքներին: Այս փուլում անձնային արժեքներն որոշվում են վերացական, համընդհանուր արժեքներով. տեղի է ունենում դրանց համաձայնեցում հասարակության և ուրիշների արժեքների հետ, կողմնորոշումն ուղղվում է դեպի խղճի կանոններ, համընդհանուր էթիկական սկզբունքներ:

Լ. Վիգոտսկին քննադատում է Ժ. Պիաժեի հայեցակարգում ներկայացվող սոցիալականացման ըմկալումը՝ որպես սոցիալական միջավայրի արտաքին ճնշում, որը

[3] Крайг Г., Психология развития [Текст]: Пер. с англ. / Г. Крайг. –СПб.: Питер, 2000, 992 с., с. 241.

երեխային ստիպում է ընդունել մտքի օտար սխեմաներ։ Լ.Վիգոտսկին և նրա հետևորդները զարգացրել են ներքնայնացման մասին պատկերացումը որպես սոցիալականացման կառուցակարգ։ Լ. Վիգոտսկու պնդմամբ՝ ներքնայնացումն անձի կենսաձևի անցումն է սոցիալականից դեպի անհատականը (ներհոգեկանը)։

Գ. Մ. Անդրեևան, որպես արժեքների անհատական համակարգի ձևավորման միջավայրային գործոններ, առանձնացնում է ընտանիքը, դպրոցը, աշխատանքային կոլեկտիվը, որոնք «սոցիալական փորձի միջնորդ» են, որոնցում անձը հաղորդակցվում է նորմերի և արժեքների համակարգի հետ[4]։

Անձի արժեքների համակարգը հիմնված է այն հասարակության գաղափարախոսության վրա, որին նա պատկանում է։ Տարբեր գաղափարախոսությունների դեպքում առաջնությունը կարող է տրվել տարբեր արժեքների։ Անձն իր զարգացման ընթացքում ներգրավվում է տարբեր փոքր և մեծ խմբերի մեջ։ Դրանցից յուրաքանչյուրի կյանքում մասնակցությունն անհատի մեջ ձևավորում է որոշակի բնորոշ գծեր։ Նրա անձնային հատկությունները ձևավորվում և զարգանում են կախված որոշակի սոցիալական շերտին, ազգին, էթնիկ խմբին, մասնագիտական կատեգորիային, ընտանիքին և այլ խմբերին պատկանելությունից։ Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը[5]։

Այսպիսով, ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների, անձնային արժեքների մասին պատկերացումները կարելի է ներկայացնել հետևյալ խմբերով.

1. արժեքը՝ որպես պատկերացում, դիրքորոշում,
2. արժեքը՝ որպես պահանջմունք կամ շարժառիթ,

[4] Андреева Г. М., Психология социального познания. М.: АспектПресс, 2000, 288 с. , с. 104

[5] Вебер М., Основные социологические понятия, Избр. произведения, Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова. М.: Прогресс, 1990. сс. 602-643.

3. արժեքը՝ որպես իմաստ և որպես հասարակության կենսագործունեության արդյունք։

Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն։ Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ։ Այդ գործընթացում հատկապես կարևորվում է ներքնայնացման գործընթացը՝ որպես սոցիալական խմբի արժեքներից անցում դեպի անձնային արժեքները։ Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները։

ԳԼՈՒԽ 2. «ՄԱՅՐԵՆԻ» ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Հայերենի ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիարակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն: Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ: Այդ տիպի դասերից են ներածական դասը, խառը կամ համակցված դասը, նոր գիտելիքների ուսումնասիրման դասը, զրույց-դասը, գիտելիքների ստուգման և գնահատման դասը, կրկնության - հանրագումարային դասերը, կինոդասերը, էքսկուրսիոն դասը, սովորողների ռեֆերատների պաշտպանության դասը, սեմինարների դասը, ստուգարքի դասը: Թվարկվածներից առավել գործածականը և արդյունավետը, մեր համոզմամբ, խառը /համակցված/ դասն է: Դասի այս տիպն այսպես է կոչվում այն պատճառով, որն ընդգրկում է ուսուցման գործընթացի շատ կողմեր՝ նոր գիտելիքների հաղորդում և յուրացում, ամրապնդում, ընդհանրացում, ստուգում և գնահատում: Դասի այս տիպը ամենատարածվածն է, մանավանդ ցածր դասարաններում, որտեղ սովորողների ուշադրությունն անկայուն է, նրանք չեն կարողանում երկար ժամանակ զբաղվել միևնույն բնույթի աշխատանքով, կարիք են զգում աշխատանքի բովանդակության, ուսուցման ձևերի ու մեթոդների հաճախակի փոփոխման, այլապես կկորցնեն հետաքրքրությունը դասի նկատմամբ: Դասի այս տիպը կիրառվում է ոչ մեծ ուսումնական թեմաներ ուսումնասիրելիս: Այս դասի ընթացքում գործադրվում են բացատրական ցուցադրական,

էվրիստիկ զրույցներ, դատողական բացատրական-ցուցադրական, դատողական, վերլուծական և այլ եղանակներ։ Եթե դասին գրեթե հավասարապես են ներկայացվում երկու կամ մի քանի դիդակտիկական նպատակներ, ապա դա կլինի խառը միացյալ դասի այս կամ այն տարբերակը։

Մայրենիի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով։ Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում։ Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են։ Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում։ Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները։ Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների

միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում։ «Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»։

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում։ Նա առանձնացնում է

ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: «Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ»: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի բովանդակային մասում տեղակայված դրույթների գործնական ուսումնասիրության և սովորողների կարիքների բացահայտման նպատակով կատարել եմ գործնական հետազոտություն: Ընտրվել է աշակերտների խումբ, ովքեր սովորում են Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցի 4-րդ դասարանում: Հետազոտության մասնակցել են 19 աշակերտ: Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից մենք դիտարկում ենք այն արժեքները, որոնք դրսևորվում են՝

- Լեզվի գործառույթներում,
- Դպրոցում մայրենիի ուսուցման նպատակներում:

Լեզվի հիմնական գործառույթներն են՝ հաղորդակցական, ճանաչողական, տեղեկատվական, ներազդման, նշանակողական, մտքերի ձևավորման ու արտահայտման և այլն: Հաղորդակցական գործառույթը ենթադրում է խոսքային հաղորդակցում: Մայրենի լեզվի ուսուցման համակարգում այս գործառույթի իրականացումը նշանակում է մեր կողմից ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ այնպիսի արժեքների դիտարկում, որոնք արտահայտվում են փոխադարձ շփման, բարեկիրթ հաղորդակցման ընթացքում:

Ձևավորել իր ազգային պատկանելության, մայրենի լեզվի անհրաժեշտության և առաջնայնության գիտակցում, հարգանք դիմացինի արժանապատվության և ինքնության նկատմամբ, գեղեցիկը, բարին, մարդկայինը տեսնելու, ընկալելու և գնահատելու կարողություն:

«Անակնկալը» թեմայի շուրջ աշակերտների հետ կատարեցինք քննարկում, նախքան դասին ծանոթանալը, իմ կողմից առաջարկվում է երեխաներին թվարկել այն ամենը, ինչ գիտեն կամ կարծում են, թե գիտեն «Անակնկալ»-ի մասին՝ առանց մտահոգվելու դրանց ճիշտ կամ սխալ լինելու իրողությամբ: Այստեղ կարևորը նրանց պատկերացումները և ցանկությունները պարզելն է, ընթացքում պարզվում են անհամաձայնությունները: Երբեմն հարցեր եմ տալիս արդյո՞ք բոլորն են համաձայն առաջարկված մտքին և եթե այո կամ ոչ՝ ինչու՞: Յուրաքանչյուր պատասխանից առաջ աշակերտին մտածելու ժամանակ է

տրամադրվում, պատասխանելիս անպայման խրախուսում եմ արտահայտած ինքնուրույն կարծիքները:

«Անակնկալը» տեքստի վրա աշխատելիս աշակերտներին ասում եմ դուրս հանել տեքստից այն հատվածները, որտեղ ներկայացվում է նշանավոր վայրերը, ինչպես նաև պատմական կերպարներ: Երեխաները օգտվելով բնագրից՝ պետք է կարողանան եզրակացություն անել.

- «Երեխաները Երևանում տեսան Հանրապետության հրապարակը, երգող շատրվանները, Վարդան Մամիկոնյանի, Հայկ Նահապետի արձանները»:
- «Նրանք շարժվեցին դեպի Խոր վիրապ»:
- «Տեսան Սարդարապատի հերոսամարտին նվիրված համալիրը»:
- «Նրանք վայրէջք կատարեցին Դվին գյուղում ՝ Արամի դարբին պապի հետ հանդիպելու և Խոր վիրապ այցելելու համար»:

Այստեղ անհրաժեշտ է երեխաներին մի փոքր ավել տեղեկություններ տալ տեքստում ներկայացված նշանավոր վայրերի և հերոսների մասին, հետաքրքրասիրություն առաջացնել ավելին իմանալու, ինչպես նաև հայրենասիրություն և աշխատասիրություն սերմանելու համար:

Դասն ամփոփելու համար սովորողներին խնդրում եմ յուրաքանչյուրն իր կողմից գրատախտակին գրի այն արժեքներն, որոնք ձևավորվել են իրենց մեջ դպրոցում, մեծամասնության պատասխանը հետևյալն էր. «Զինվորը, Հայրենիքը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, հարգանքը, օգնել ընկերոջը, աշխատասիրությունը, կամեցողությունը, վստահությունը, ծնողասիրությունը»:

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների

մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են:

Այսպիսով, «Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում» թեմայի համալիր ուսումնասիրության արդյունքում, կարող ենք նշել, որ.

- Սովորողների արժեքային համակարգը բազմակողմանի զարգացնելու համար հարկ է նրանց ավելի շատ ներառել արտադասարանական միջոցառումների մեջ:
- Թատրոններ հաճախելը, էքսկուրսիաները, պատմամշակութային վայրեր այցելելը, հայտնի արվեստագետների, քանդակագործների և արհեստագործների արվեստանոցներ ու արհեստանոցներ այցերը ևս պետք է ներառված լինեն ուսումնական հաստատության գործունեության մեջ, ինչը կարծում եմ էլ ավելի պատկերավոր կդարձնի արժեքների ըմբռնումը:
- Դասաժամերին հավելյալ քննարկումները, պատմությունից օրինակները ևս լավ միջոց են արժեհամակարգ ձևավորելու: Միջմշակութային հաղորդակցությունը, նոր մշակույթների հետ ծանոթությունը, նույնպես կարող են ձևավորել արժեքներ սովորողների մեջ:
- Կազմակերպել հանդիպումներ, ականավոր գործիչների հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում» հետազոտական աշխատանքի համալիր ուսումնասիրության և գործնական կիրառումը թույլ է տալիս փաստել, որ ներկայիս զարգացած տեխնոլոգիական ժամանակաշրջանում մեծ նշանակություն ունի սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորումը: Այն հնարավորություն է տալիս սովորողներին դեռ վաղ տարիքում հասկանալու իրենց համար կարևոր արժեքները և դրանց ունեցած ազդեցությունը իրենց հետագա կյանքում: Հետազոտական աշխատանք կատարելուց հետո կարող ենք ասել, որ բոլոր տարիքային խմբերում էլ ձևավորվում է այնպիսի արժեքային համակարգ, որը մեզ՝ ուսուցիչներիս լավատեսությամբ է ներշնչում: Մենք պետք է ճիշտ ուղղորդենք աշակերտներին, առավել ևս ներկայիս տեղեկատվական բազմանյութ իրականության մեջ, որպեսզի իրենց ուրույն դիմագիծը ճիշտ ձևավորեն արժեքային համակարգի կոնտեքստում և երբեք չկորցնեն այն:

Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատքաղաքացու արժեհամակարգի ձևավորումը: Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Կարծում եմ, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Մանկավարժը պետք է սեփական օրինակով դաստիարակի սանին, օրինակ ծառայի, որովհետև օրինակի ուժը զորավոր է:

Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության

խիստ բարդ խնդիրը: Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ:

Կատարված վերլուծությունների արդյունքում եզրահանգել եմ այն մտքին, որ աշակերտների մոտ արժեհամակարգի ձևավորումը դպրոցի գերխնդիրն է: Այն իրականացվում է դպրոցում դասավանդվող ցանկացած առարկայի շրջանակներում, և հատկապես Մայրենիի դասաժամերին: Մայրենի առարկայի բովանդակությունը թույլ է տալիս յուրաքանչյուր թեմայի վերջնարդյունքում ձևավորել բարեկիրթ, դաստիարակված, շրջահայաց քաղաքացիներ՝ մարդ ձևավորելն ու ճիշտ արժեհամակարգ կերտելը դարձնելով հիմնախնդիր: Մարդ, ով կլինի աջակցող, կարեկից, բարեգութ, ուրիշի ցավով ապրող, խնդությամբ ու հաջողություններով ապրումակցող, ծնողասեր և ընկերասեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017, 191 էջ
2. Андреева Г. М., Психология социального познания. М.: АспектПресс, 2000, 288 с.
3. Вебер М., Основные социологические понятия, Избр. произведения, Сост., общ. ред. и послесл. Ю. Н. Давыдова. М.: Прогресс, 1990. сс. 602-643.
4. Журавлева Н. А., Психология социальных изменений: ценностный подход. - М.: –зд-во «Институт психологии РАН», 2013. – 524 с.
5. Крайг Г., Психология развития [Текст]: Пер. с англ. / Г. Крайг. –СПб.: Питер, 2000. – 992 с.
6. Мудрик А. В., Социализация человека: Учеб. пособие для студ. высш. учеб. заведений, М.: “Издательский центр Академия”, 2004, 304 с